Ռուբեն Սևակ

Դրամին աղոթքը

Խեղճերուն

Հողագունտիս կեղևին վրա տրտմածին
Թափառահած իմ ոտքերս քալեցին՝
Եղբայրության տաքուկ շունչը փնտրելեն,
Ու ամեն տեղ իմ հեգ աչքերըս լալեն
Տեսան փարթամ մեծատունին դըրան քով
Աղքատ մայր մը՝ որ կը սպասեր արցունքով:

Ո՞վ ես, ուրեմն, թշվառության դու գործի՝
Դրրամ, որուն լուռ ցոլքին մեջ կ'արծարծի
Ճակատագիրը տառապող մարդկության:
Ըսե՛, քու կամքդ պիտի իշխե՞ հավիտյան,
Ու պատմե ինձ, պիտի ըլլա՞ն միշտ, ավա՜ղ,
Ըզքեզ լալով մեռնողները անսրվաղ:

Մարդն, առաջին այն մարդը, որ տենչավար
Պեղեց, խուզեց հողին արգանդը խավար,
Ու չարանենգ թաքստոցեդ դարավոր
Խլլեց զքեզ, հղկեց, մաքրեց փառավոր,
Այն մարդը, վա՜խ, Ժանտ ցոլքերուդ մեջ Ժպտուն
Չը նշմարե՞ց տխուր անկումը Մարդուն:

Տառապանքի, անհուսության որբեր խուլ
Կը խեղդըվին քար պատերու տակ խարխուլ,
Սովալըլուկ բյուր թշվառներ տրտմորեն
Իրենց նիհար ձեռքերը քեզ կ'երկարեն,
Ու տենդահար, փողոցին վրա, ամեն դի
Քանի՜ փոքրեր կան՝ մայրազուրկ, անոթի:

Իշի՛ր, իշի՛ր խոնարհորեն, մեղմորեն,
Իշիր ոսկի սանդուխներուդ մատներեն՝
Թշվառության խշտյակներուն մեջ խոնավ,
Ուր քու ցոլքերըդ նըշուլած չեն բընավ.
Ցամքած շյուղեր բոլորը քեզ կը դառնան.
Իշի՛ր, իշի՛ր անձրևներու պես գարնան . . .